Тема: Դասընթացի հնարավորություն հաշմանդամություն ունեցող կանանց համար
Дата: 2024-06-06 15:04
От: Agate NGO <agate.ngo@googlemail.com>
Кому: marzpet.armavir@mta.gov.am

Հարգելի Դավիթ Խուդաթյան,

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ հունիս, հուլիս ամիսներին իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ գենդերային խտրականություն և բռնություն» թեմայով դասընթաց Հայաստանի Հանրապետության 10 մարզերում և Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար։

Խնդրում ենք առցանց հայտադիմումը [1] տարածել Արմավիրի մարզում բնակվող 16 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների շրջանում կամ տրամադրել կոնտակտային տվալներ, որպեսզի կարողանանք հնարավորինս շատ կանանց և աղջիկների ներգրավել այս կարևոր թեմայով դասընթացին։

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 094 83 23 01 հեռախոսահամարին։

Շնորհակալություն համագործակցության համար:
Հարգանքով՝
«Ագաթ» ՀԿ համակարգող Մարինե Ավետիսյան